ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ք. Համբարձումյան, Ռ. Կարապետյան, Մ. Խալափյան, Լ. Անտոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Զալինյան

1. Հայտերի բացման մասին

1.1. Հայտերի բացման.

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ

-օրը՝ 28 հոկտեմբերի 2016թ.

-ժամը՝ 09:30

1.2. Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1.	ՆՈՐՔ-7 ՍՊԸ ՎԻ ԷՄ ՋԻ և ՈՐԴԻՆԵՐ ԲԲԸ /կոնսորցիում/
2.	ԴԵԱԳԱ ՍՊԸ
3.	Ա/Ձ ՀՐԱՅՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
4.	ՖՈՏՈՆ ՍՊԸ

1.3. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.4. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

* «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում, մասնավորապես հավելված 3.6-ում էլ. ստորագրությունը առկա չէ: Այն որակվեց անհամապատասխանություն:

* «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է մասնակիցը հավելված 1-ում նշել է, որ հանդիսանում է ոչ ռեզիդենտ, սակայն կցել է Հավելված 3.4-ը Հավելված 3.5-ի փոխարեն:

Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի դրույթով, վերոհիշյալ անհամապատասխանությունները որակեց «անհամապատասխանություն ոչ գնային պայմանների մասով» և Մատակարարներին տրվեց 1 օր ժամանակ (մասնակցին ծանուցելու պահից հաշված) այն շտկելու համար՝ կասեցնելով գնահատման նիստը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝		Մ. Հայրապետյան
Անդամներ՝		Ք. Համբարձումյան
		Ռ. Կարապետյան
		Մ. Խալափյան
		Լ. Անտոնյան
Համակարգող՝		Մ. Զալինյան